264

1. Հեռավոր մի երկրում,
Մսուրի մեջ մի մութ,
Ծնվեցիր, իմ Փրկիչ սիրելի:
Թեև չեմ տեսել ես
Աչքերովս երբեք,
Հավատքով եմ տեսել
Քեզ, իմ Տե՛ր (2):

2. Ինձ համար ես եկել
Եվ ապրել երկրի վրա,
Ինձ համար անդադար աղոթել:
Թեև չեմ տեսել ես
Աչքերովս երբեք,
Հավատքով եմ տեսել
Քեզ, իմ Տե՛ր (2):

3. Ինձ համար ես տարել
Ծանր խաչդ հլու,
Ինձ համար ես կրել
տանջանքներ:
Թեև չեմ եղել ես
Հեռավոր այդ երկրում,
Հավատքով եմ տեսել
Քեզ, իմ Տե՛ր (2):

4. Ինձ համար ես մեռել
Ու դրվել գերեզման,
Ինձ համար հարություն ես առել:
Թեև չեմ եղել ես
Պահապան մի զինվոր,
Հավատքով եմ տեսել
Քեզ, իմ Տե՛ր (2):

5. Հավատքով եմ հիմա
Տեսնում Քեզ, ո՛վ իմ Տեր,
Հոր աջ կողմը նստած ինձ
համար:
Հավատքով եմ ապրում
Այս խավար երկրի վրա,
Հավատքով ես պիտի
Փրկվեմ, փրկվեմ: